


բարձրացել է՞նք, որչափ ընդարձակուել են մեր ծանօթութիւնները, որչափ խելօք ենք դարձել: Ոչ ոք չի կարող այս հարցերին առանց տատանուելու դրական պատասխան տալ: Յատկապէս բարոյական խնդիրների մէջ աւելի պարզ է, գիտութիւնը սահմանաւոր է և մի բեկոր միայն: Եթէ չենք կամենում խելօք գիշատիչ կենդանիներ դառնալ, մեր սրտերը պիտի բանանք Փրկչի անձնաւորութեան համար: Նորա խօսքը ամենից խելօք և գիտուն մարդու համար նոյնպէս նշանակալից է. «Առանց իմ ոչինչ կարէք առնել»: Մեծ ու օգտակար գործ կատարելու համար մարդիկ պէտք ունին սուրբ և անձնական իդէալներէ: Բայց գիտութիւնն ինքնըստինքեան այդպիսի իդէալներ չի տալիս: Դոքա հաւատից են բղխում:

Գ. Վ. Յովսէփեան



## Ս. ԷԶՄԻՆԺՆԻ ՄԻՆԵՐՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

Անցեալ համարի «Հայոց հայրապետական աթոռը» վերնագրով յօդուածի մէջ փորձել էինք ամփոփել ամենայն Հայոց հայրապետութեան և նորա աթոռակալի նշանակութիւնը ազգային, կրօնական և քաղաքակրթական տեսակէտներով: Շատ համառօտ կերպով յայտնել էինք, որ մեր ազգային եկեղեցու վերականգնութեան և պայծառութեան հետ կապուած իդէան ու տենչերն իրագործուել կարող են խելացի կերպով միայն Հայրապետի անմիջական ղեկավարութեամբ: Այս անգամ կամենում ենք խօսել այն գործոններից մէկի մասին, որի ձեռքով հայրապետական աթոռի գաղափարը թանձրանում է կեանքի մէջ և պտղաբեր դառնում:



Ամուրի հոգեւորականութիւնը անհրաժեշտ չենք համարում կրօնական տեսակէտով և հակուած չենք ամենեւին առաւելութիւն տալու նաև անձի սրբութեան վերաբերութեամբ: Ընտանիքը սուրբ է և չի խանդարում մաքուր և աստուածահաճոյ կեանք վարելու նաև աշխարհի մէջ: Դեռ կարող ենք ասել առանձին արժանիք չէ գայթակղութիւններէից զերծ մնալ անապատների և առանձնութեան մէջ. կեանքի պատերազմում տարած յաղթութիւնն է իսկական առաքինութիւնը: Այն ինչ որ հասկանալի էր վանականութեան դասական ժամանակ, որ պատմական կեանքի հետ կապուած մի երևոյթ էր, անընդունելի է ներկայ դարում: Բարեբաղդաբար ժամանակն ինքնըստինքեան բարեփոխել է հին հայեացքները, կեանքի համար պահանջ չեն այլ ևս արեղայարաններն ու միանձնարանները: Եւ մեր եկեղեցու մէջ այդպիսի հաստատութեանց միայն բեկորներն են մնացել, ինչպէս Սեան, Լիմ և Գտուց կղզիների անապատները: Սակայն նոյնը չենք կարող ասել դեռ ևս գործնական վանականութեան մասին, որ եկեղեցու իսկական, հոգեւոր զինուորութիւնն է: Եկեղեցու նուիրապետութեան ներկայ կազմութիւնը ոչ միայն պահում է գործնական վանականութեան գոյութեան իրաւունքը, այլ և նորա առաջ մի բարձր և վսեմ կոչում, առաքելութիւն դնում: Ուր հասարակութիւն, բազմութիւն կայ, այնտեղ կայ և պահանջ, որ ոմանք նուիրուին այդ հասարակութեան ծառայութեան: Մեր կուսակրօնութիւնը ուխտեալների այս դրոշմն ու կնիքը պիտի կրի իւր ճակատին: Եկեղեցու և Դուիրապետութեան ներկայ կազմութեան մէջ ուխտեալների այդ դասը կուսակրօնութիւնն է կազմում: Գուցէ կգայ ժամանակ, որ ուխտաւորութեան և անձնուիրութեան նոր ձևեր կստեղծուին, բայց մինչ այդ գործնական վանականութիւնը կմնայ դեռ ևս անհրաժեշտութիւն: Գործնական վանականութիւնը, հակառակ անապատական վանականութեան, կոչում ունի ոչ թէ աշխարհից խուսափելու, այլ աշխարհի մէջ և աշխարհի համար գործելու:



Այդ, մեր եկեղեցու այդպիսի վանականութեան մէջ ամենից կարևոր դեր ունի կատարելու Մ. Աթոռի միաբանութիւնը։ Այդ կարևորութիւնը բղխում է հայրապետական աթոռի և Էջմիածնի միաբանութեան սերտ յարաբերութիւնից։ Հայրապետը մեր եկեղեցու գլուխն է, հոգևոր կեանքի ղեկավարը, բայց նոյն իսկ հանճարեղ կաթողիկոսն առանց եռանդուն և բանիմաց աջակիցների իւր պաշտօնը չի կարող ցանկալի կերպով արդիւնաւորել։ Ի՞նչ է զօրապետը պատերազմի դաշտում առանց զինուորների։ Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական, հոգևոր զինուորութիւնը Մ. Էջմիածնի միաբանութիւնն է։ Աւետարանի բերած բազմազան քաղաքակրթութեան լոյսն անշէջ վառելու համար նա անհրաժեշտ կարիք ունի այնպիսի պաշտօնեաների, որոնք մտաւոր կարողութիւն, հմտութիւն և անձնուիրութիւն ունենան իրենց կոչման համար։ Եւ յիշաւ անցեալում Էջմիածնի միաբանութիւնը շատ կարևոր դեր է կատարել մեր ազգային-եկեղեցական կեանքում։ Այստեղից են դուրս եկել ժամանակի գրական մշակներն ու հովիւները, նուիրականների և առաջնորդների մեծագոյն մասը, որոնք աշխարհիս երեսին ցրուած հայերին կապել են հայրապետական աթոռի հետ, տարագիր հայերի մէջ սէր արծարծել դէպի հայրենի աւանդութիւններն ու սրբութիւնները։

Ապագայ կաթողիկոսի անմիջական ուշադրութեան առաջին խնդիրներից մէկը պիտի լինի իւր աթոռի պատուին և կոչման վայել միաբանութիւն կազմել, Էջմիածնի վանքի վանահայրը կաթողիկոսն է և միաբանութիւնը նորա անմիջական իշխանութեան ենթարկուած։ Իսկ այժմ այդ միաբանութիւնը քայքայուած է։ Ռուսաց տիրապետութիւնից և Պոլսեանիայի հաստատութիւնից յետոյ նա իբրեւ ամբողջութիւն զրկուած է նոյն իսկ վանական ներքին գործերի մէջ որ և ներգործական դեր կատարելու իրաւունքից, անուանական մի հաստատութիւն, առանց որոշ կանոնադրութեան, պարտուց և իրաւանց սահմանների։ Նախկին դարերում աւանդութիւնը զօրեղ էր և



կարող էր լրացնել կանոնադրութեան պակասութիւնը, բայց այժմ արդէն միայն աւանդութեամբ անհնար է մի կարգաւորեալ, մեծ հաստատութիւն շարունակել: Այդ է պատճառը, որ վերջին ժամանակներս Ա. Էջմիածինն այլ ևս միաբանութիւն չունի իսկական մտքով, այլ անհատներէ մի խմբակցութիւն, որոնցից պաշտօնեաներ են ընտրուում այս կամ այն գործի և պաշտօնի համար: Վերակազմել այդ միաբանութիւնը, տալ նորան իւր ներքին գործերը վարելու իրաւունք և կանոնադրութիւն, միաբանական կեանքը դարձնելով նախակրթարան տալագայ գործունէութեան, նշանակում է տալհովել նոյն իսկ հայրապետական իշխանութեան և հեղինակութեան բարերար ազդեցութիւնը ամբողջ եկեղեցու և հօտի մէջ:

## Բ.

Մայր Աթոռը նախ և առաջ վարչական կեդրոն է և նորա միաբանութիւնից են դուրս գալիս մեր եկեղեցու նուիրապետութեան բոլոր պաշտօնեաները բացի քահանաներից և համայնական եկեղեցու ստորին ծառայողներից: Էջմիածնի միաբան են բոլոր եպիսկոպոսներն ու առաջնորդները, Սինոդի անդամները, փոխանորդները, վանահայրերը, երբեմն գործակալները: Նոցանից իւրաքանչիւրը տասնեակ և հարիւր հազարների հովիւ է, բազմատեսակ դպրոցական և այլ հաստատութիւնների բաղդը ըստ մեծի մասին նրանցից կախուած: Նոքա յարաբերութեան մէջ են պետական հաստատութիւնների և անձանց հետ, շփումն ունին հասարակութեան բարձր և ստորին խաւերի հետ, կոչուած են հոգալու իրենց հօտի բարոյական, հոգեւոր և շատ յաճախ նաեւ նիւթական կարիքները: Այսպիսի կարեւոր պաշտօնների գլուխ անցած մարդիկ պէտք է հարկաւոր չափով պատրաստութիւն, հմտութիւն և մտաւոր կարողութիւն ունենան, նոքա նիւթական զօրութիւն ու իշխանութիւն չունին իրենց ծանր պարտքը կատարելու, միակ զօրութիւնը բարոյական



հեղինակութիւնն է: Կրօնի, սրբազնագործութեան խորհրդաւորութիւնն անշուշտ իւր նշանակութիւնն ունի այս խնդրում, բայց դարերի յառաջագիմութեան հետ փոխւում են և հեղինակութեան պայմանները: Կրթութեամբ, աշխատանք և հասկացող ժողովրդի մէջ բարոյական հեղինակութիւն կարելի է վայելել միայն բարոյական զէնքերով:

Իսկզբանէ անտի կրօնի և եկեղեցու պաշտօնեաները գիտութեան ու կրթութեան կողմից առաւելութիւն են ունեցել ժողովրդի ամբողջութեան մէջ, այդ առաւելութիւնը անհրաժեշտութիւն է և այժմ, եթէ մեր կրօնն ու եկեղեցին իւր հօտի բարոյական-քաղաքակրթական յառաջագիմութեան մէջ ազդեցիկ դեր է կամենում կատարել: Հայ եկեղեցու նուիրապետութեան ներկայացուցիչ դասը պէտք է ձեռք բերէ դարձեալ իւր նախկին հմայքը՝ իւր բարոյական հեղինակութիւնը, առանց որին չի կարող իւր դաստիարակչական մեծ առաքելութիւնն իրագործել: Իսկ հեղինակութիւնը մտքի գերազանցութեան և գիտութեան, զգացմունքի խորութեան և սիրոյ ծաղիկն է. ուր չկան այդ տարրերը, այնտեղ բարոյական հեղինակութեան ծառն արմատ չունի և վաղ թէ ուշ պիտի խամրի արևի ջերմութեան առաջ: Բարձր տիտղոսներն ու պաշտօնները բաւական չեն ժողովրդի յառաջագիմութեան և փրկութեան առաջնորդ հանդիսանալու, անհրաժեշտ է պաշտօնի հետ միացնել բարոյական արժանիք, գիտութիւն, կրթութիւն, եթէ չենք կամենում սիրոյ փոխարէն արհամարհանք հնձել: Կան բնական խելքի տէր անձնաւորութիւններ, որոնք առանց բարձրագոյն կրթութեան կարող են շատ օգտակար լինել իրենց շրջապատի և պաշտօնի համար. կան և համալսարանականներ, միանգամայն անպէտք գործնական կեանքի համար, սակայն բացառութիւնները օրէնք չեն: Բնական խելքի և եռանդի հետ միացած կրթութիւնն ու գիտութիւնը կրկնապատիկ և եռապատիկ արգիւնաւոր կլինի: Պարզ է, որ ներկայ ժամանակում պատահական մարդկանցից այլ ևս միաբանութիւն կազմել չենք կարող և դուրանով էլ մեր միաբանութիւնը չի կարող



իւր այն բարձր կոչումն իրագործել, որ դնում է նորա վերայ հայրապետական աթոռի մերձաւորութիւնը: Մինչդեռ հին սերունդը ժառանգաւորաց դպրոցում ժամանակի համար բաւարար կրթութիւն էր ստանում, մինչդեռ հոգեւոր ճեմարանի հաստատութեամբ Մ. Աթոռի ժառանգաւորներն այստեղից պէտք էր սպասել և արդէն սկզբնաւորութիւնը կատարուած էր, անարգելք մուտք սկսեցին գործել այնպիսի անպատրաստ տարրեր, որոնք ներկայ ժամանակի պահանջներին բաւարարութիւն տալ չեն կարող: Բացառութիւններ միշտ կարող են լինել, բայց բացառութիւնը չպէտք է տիրապետող դառնայ, իսկ օրինականը բացառութիւն:

Փորձեր եղան նոր միաբանութիւն կազմելու, բայց այդպիսի ձեռնարկութիւնները ժամանակի ընթացքում և դժուարութեամբ են արմատ բռնում: Նոքա կարօտ են խնամքի, առանձին ուշադրութեան, այն ինչ ոչ մի խրախոյս, քաջալերութիւն չեղաւ դրսից և ներսից: Ընդհակառակ, կարծես մի խուլ հալածանք կար այս նորութեան դէմ: Գուցէ սխալներ ևս կատարուեցան այս գործի համար աշխատողների կողմից: Վերջապէս միաբանական կարգապահութեան խանգարումները, երիտասարդ ուսանող սարկաւազների միանգամայն ազատ և անպատասխանատու վիճակը տարիների ընթացքում, կտրուած էջմիածնից, և հոգեւոր իշխանութեան բացարձակ անտարբերութիւնը դէպի նրանց, հասարակութեան սխալ կարծիքն ու տրամադրութիւնը դէպի այս նորութիւնը և յեղափոխական վերարկու հագած զանազան արտառոց գաղափարներ և պղտոր հոսանքներ տատանում յառաջ բերին երիտասարդ նուիրեալներից ոմանց մէջ և միմեանց յետևից վանականութիւնից հրաժարուեցան պատրաստի ուժերի մի մասը, որոնց ներկայութիւնն ու գործակցութիւնն անշուշտ ուրիշ կերպարանք պիտի տար հետզհետէ մեր միաբանութեան: Նոքա թողին իրենց ուխտը և հեռացան, առանց կրօնական, ներքին համոզման խորին պատճառներից դրդուած, իսկ հասարակութեան աչքում այդ



դասալիք արարքը ոչ մի քննադատութեան և դատապարտութեան չենթարկուեցաւ, նորա համար այդ այնչափ թեթեւ մի գործ էր, ինչպէս ձեռնոցներ փոխելը: Հեռացողները մինչև իսկ առիթ չունեցան մտածելու, թէ ինչպիսի հարուած են տալիս մի սրբազան և վեհ գործի, որի յաջողութեամբ էր պայմանաւորուած մեր միաբանութեան վերակազմութեան ապագան: Եւ ահա մինչդեռ մեր միաբանութեան ձերունի անդամները միմեանց յետևից գերեզման են իջնում, ժամանակի պահանջների համեմատ նոր սերունդ չկայ, որ նրանց տեղը բռնի: Բայց մենք յուսով ենք, որ այս հիասթափութեան տպաւորութիւնը կմեղմանայ և փոթորկալից շրջանից յետոյ կգան խաղաղ յառաջադիմութեան տարիներ, երբ ճեմարանը հաւատարիմ իւր կոչման ուրիշ տեսակ գործիչների հետ, Մ. Աթոռի համար ժառանգաւորներ ևս կպատրաստէ:

Էջմիածնի միաբանութիւնը վերակազմելու հարցը կեանքի և մահուան խնդիր պիտի նկատուի մեր բանիմաց և լուրջ հասարակութեան համար, ևս առաւել Ս. Հայրապետի համար:

## Գ.

Սակայն ոչ Մ. Աթոռը և ոչ նորա միաբանութիւնը չեն կարող միայն վարչական նպատակների ծառայել: Ուրովհետև վարչական գործն ինքնըստինքեան նպատակ չէ, այլ եկեղեցու միջոցներից մէկը հօտին քրիստոնէական դաստիարակութիւն տալու: Այս նպատակի համար կան և ուրիշ միջոցներ, որ վարչութեան հսկողութեան տակ կամ նորա աջակցութեամբ դարձեալ նոյն դաստիարակչական և քաղաքակրթական նպատակին են ծառայում: Այդ միջոցները կարող ենք երեք բառի մէջ ամփոփել, խօսք, գիր և արուեստ իրենց ընդարձակ բովանդակութեամբ:

Կենդանի խօսքը քրիստոնէութեան ծաւալման ամենահին ձևն է, աւելի հին քան եկեղեցական կամ վարչական կազմակերպութիւնը: Քրիստոս իւր աւետարանը



կենդանի խօսքով է քարոզել, առաքեալները նոյնպէս, երկրորդաբար միայն օգտուելով գրից։ Բայց քրիստոնէական եկեղեցին կենդանի խօսքին միացրել է գիրը (գրականութիւն, գիտութիւն) և արուեստը ժամանակի ընթացքում։ Քարոզչական արուեստը նոյնչափ անհրաժեշտ է եկեղեցու համար, որքան և վարչական դործը։ Վերջինն առանց առաջնի մարմին է միայն առանց հոգու։ Մայր Աթոռի միաբանութիւնը պէտք է նաև քարոզչական մի դպրոց լինի, աւետարանի խօսքը նորա միջոցով պէտք է սերմանուի հայ ժողովրդի հոգու խորքերում։ Մեր միաբաններից ոմանց համար քարոզչութիւնը պէտք է կոչում դառնայ, իսկ հովիւները կամ վարչական անձինք պատրաստութիւն պէտք է ունենան պաշտօնի հետ նաև քարոզչական պարտաւորութիւն կատարել։ Բայց քարոզիչ լինելու համար ոչ միայն պէտք է ունենալ համոզմունք, տաղանդ, այլ և գիտութիւն, ընդհանուր ծանօթութիւններ, որպէս զի երկու կամ երեք քարոզից յետոյ՝ ձանձրալի չդառնայ ունկնդիրների համար։ Կրօնի և ազգային եկեղեցու վերաբերեալ խնդիրները պէտք է արծարծուին նաև հրապարակային դասախօսութիւնների մէջ։ Սոցիալական և քաղաքակրթական կեանքի երևոյթիւնների ու պահանջների մասին պէտք է կարողանայ իւր կարծիքը յայտնել և ուղղութիւն տալ նաև հայ հոգևորականը։ Մեր եկեղեցու մէջ հին դարերում վարդապետական յատուկ դասակարգ է եղել, որոնք զբաղուել են քարոզչութեամբ և գիտութեամբ, իսկ այժմ վարդապետ է կոչում ամենայն ոք, ով վեղար է դնում, թէկուզ աւետարանը չկարողանայ եկեղեցում առանց կակաղելու կարգալ։

Վարդապետական դասակարգի մասին խօսք անելով, կարող ենք մեր միաբանութեան մի երրորդ կոչումը պարզել։ Մ. Աթոռի միաբանութիւնը պէտք է նաև գիտնական հեղինակութիւն ունենայ։ Մեր խօսքը այն բարձրագոյն կամ առնուազը ճեմարանական կրթութեան մասին չէ, որ հայ վարդապետը պէտք է ստացած լինի, այլ գիտնական, մասնագէտ դասի մասին։ Մայր Աթոռի միաբա-



նութեան որոշ մասը նուիրուած պիտի լինի միայն գիտութեան մշակութեան և այդ գործը պէտք է նոյնչափ յարգի լինի, նոյնչափ գնահատութեան և ուշադրութեան արժանանայ, որչափ եկեղեցու համար կարևոր համարուած բարձր պաշտօնէութիւնները: Եկեղեցու հեղինակութիւնը, կարգաւորեալ և գիտակցական յառաջադիմութիւնը պահանջում է, որ նա իւր մասնագէտ աստուածաբանների և հայագէտների, հնագէտների գտնի ունենայ: Գիտական հրատարակութիւններ և ուսումնասիրութիւններ կատարուել են մեր միաբանութեան մէջ միայն ի միջի այլոց: Բայց մեր խորին համոզումն է, որ առանց գիտութեան չի ծագիլ մեր եկեղեցու մէջ այն լուրջ քննադատական ոգին, որ զտում, մաքրում է կեղևը միջուկից, անհրաժեշտը ժամանակակերպ: Շատ յաճախ ագիտութիւնը թելադրում է մարդուն մողուկը քամել և ուղտը կլանել: Քրիստոնէութիւնն այլ ևս աւանդական ձևով քարոզել չենք կարող, եթէ կամենում ենք, որ լսելի լինի ժողովրդի զարգացած դասին: Իսկ այդ դասը մեր ազգային-քաղաքակրթական կեանքի մէջ ներգործական դեր ունի, պէտք է փարատել այն մոլորութիւնը, թէ կրօնը միայն տգէտների համար է, պէտք է զարգացած դասի սրտի մէջ ևս հաստատել աւետարանի և Հայաստանեայց եկեղեցու սրբազան կոչման գաղափարը: Իսկ այս նպատակին հասնելու համար մտաւոր ոյժ ու կարողութիւն պէտք է ունենանք ոչ միայն նրանց գլխում իշխող նախապաշարումները ոչնչացնել եկեղեցու և կրօնի մասին, այլ և մեր լաւագոյն գանձերը ժանդից ու փոշուց սրբուած նրանց առաջ դնել: Մաքուր հաւատի կենդանարար հոսանքը իւր ներգործութիւնը պէտք է ցոյց տայ և ռամկի և կըրթութուածի հոգու մէջ: Անհնար է սակայն այլ ևս՝ մեր մեր հայրերի հաւատը նոյնութեամբ կրկնել, իւրաքանչիւր ժամանակ իւր լեզուն ու հասկացողութիւնն ունի նաև կրօնական ճշմարտութիւնների համար: Մի ժամանակ դաւաճաբանական վէճերն էին յուզում հաւատացեալների միտքը, ապա ծիսական տարբերութիւնները՝ եկեղեցիների



մէջ, իսկ այժմ՝ կամենում ենք մեր ծախու, պատքած հոգիները մաքուր կրօնի զովարար աղբիւրից յազեցնել։ Յանուն քրիստոնէական կենդանարար կրօնի, յանուն մեր ազգային եկեղեցու քաղաքակրթական-գաւառարակչական մեծ առաքելութեան համարձակում՝ ենք ասել այս խօսքն անկեղծաբար։

Իսկ անդ, այդ ոյժն ու կարողութիւնը, այդ նոր լեզուն հին ճշմարտութիւնները քարոզելու կարող է մեզ տալ գիտութիւնը։ Պէտք է աստուածաբանների, հայագէտների մի խումբ մեր միաբանութեան մէջ մշտապէս գիտութեան նուիրուելու կոչումն ունենայ, քննադատութեան բովից անցնելու մեր հաւատոյ աղբիւրները՝ հին և նոր կտակարանը, ընդհանուր և մեր եկեղեցու պատմութիւնը, դաւանաբանութիւնը, ժամապաշտութեան զարգացումը, աւանդաբար մեզ հասած շատ ծէսեր ու սովորոյթներ, որպէս զի գնահատել կարողանանք մաքուրը, անսպականը, սրտի և հոգու թելերը շարժող յաւիտենական տարրերը։ Մաքուր և վերածնուած, կենդանի և ազգային եկեղեցու գաղափարը զտուել, բիւրեղանալ և խորը նստել կարող է մեր հոգու և գիտակցութեան մէջ, երբ ուսումնասիրութեան նիւթ լինին մեր բովանդակ անցեալը, քաղաքակրթութիւնը։ Այս գիտակցութեան անսասան ժայռի վերայ միայն կարող է հաստատուել մեր հոգեւոր ինքնուրոյնութիւնը օտար զօրեղ ազդեցութիւնների դէմ և ապահովել մեր գոյութիւնը յաւիտենականութեան մէջ։

Մի ուրիշ միջոց արուեստն է, յատկապէս երաժշտութիւնը, որ խօսում է անմիջապէս մարդու սրտի հետ։ Բայց եկեղեցական ճարտապետութիւնը, նկարչութիւնը, զարդարանքն ու հանդերձանքը նոյնպէս կարեւոր նշանակութիւն ունին մեր ներքին աշխարհի զգացման համար։ Կրօնն ու արուեստը հաւասարապէս կրթում են մարդկային հոգու մի և նոյն գործարանը, սիրտը, զգացմունքը, ուստի և կրօնների ծագման և զարգացման միշտ ընթացակից են արուեստի այլ և այլ ճիւղերը։ Կրօնի նպատակն է մարդկային հոգին ազնուացնել, ուրեմն և նորա համար մի



և նոյն է, թէ նա այդ նպատակին կհասնէ խօսքով, երա-  
ժշտութեամբ, թէ ճարտարապետական մի սքանչելիքով:  
Արուեստի լեզուն ևս լռել է կամ աննշանութեան հասել  
մեր եկեղեցու մէջ: Հայոց երաժշտութեան, արուեստի,  
հնագիտական մնացորդների ուսումնասիրութիւնն է, որ  
գիտակցութիւն կտայ մեր անցեալ քաղաքակրթական  
կեանքի այդ կողմերի մասին և խթան կլինի վերանորո-  
գելու նոր ժամանակի համար: Իսկ որտեղ աւելի հեշտ  
կերպով կարելի է գտնել այն տուեալները, որոնք անհրա-  
ժեշտ են հայրենի գիտութեան, եկեղեցական երաժշտու-  
թեան և ընդհանրապէս արուեստի ուսումնասիրութեան  
համար, քան էջմիածնում: Այստեղ է մեր ամենահա-  
րուստ մատենադարանը, պատմութեան և արուեստի ու-  
սումնասիրութեան անսպառելի գանձերով, այստեղ է մեր  
միակ թանգարանը, ուր կեդրոնացնել կարելի է մեր ան-  
ցեալ կեանքի և քաղաքակրթութեան անմիջական մնա-  
ցորդները: Գիտութեան նուիրուած վանականները ընտա-  
նեկան հոգսերից ազատ՝ հնարաւորութիւն կունենան ի-  
րենց ամբողջ ժամանակը գիտութեան նուիրել, Մ. Աթոռի  
տպարանը դարձնելով մեր ներկայ կեանքի լուսաւորու-  
թեան գլխաւոր փարոսներից մէկը: Վերջապէս նոյն վար-  
դապետներից սմանք ուսուցչի պաշտօն կ'կատարեն ճեմա-  
րանում, հայրենի գիտութիւնը տարածելով ժողովրդի մէջ  
և այդ հաստատութիւնը իսկական մտքով բարձրագոյն  
դպրոց դարձնելով:

Ահա մեր սրտից բղխած իղձերն ու ցանկութիւնները  
Մ. Աթոռի միաբանութեան համար, որ ապագայ Հայրապե-  
տի առաջ կկամենայինք դնել: Եւ այս իղձերն ամենին  
անիրագործելի չեն, մի քանի տարիների հետևողական և  
անսայթաք աշխատութիւն կարող է ապահովել ցանկալի  
վերակազմութեան դուրծը:

Հայ ժողովուրդ, այդպիսի մի կաթուղիկոս տուէք մեզ:

Դ. Վ. Յովսէփեան.